



ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇՍԱԿՈՒ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

147
 (Austro-Hungarian)
 R. P. Kalemkarian
 на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bu)
 95
 VAR
 4-րորդիսիս չափը 10 սանտիմետր
 (Austro-Hungarian)
 10

ԲԱԺԱՆՈՐՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
 ուղարկողի համար 10 Ֆր.
 Տարեկան 5 »
 Գեղարվեստի համար 12 »
 Վեցամսեայ 6 »
 Ամերիկայի համար 2.50 ճ.ր.
 Տարեկան 1.25 »
 Վեցամսեայ 1.25 »
 ԳԱՆՎԻԿ ՎՃԱՐԵԼԻ
 Մանուկան սոցիալական երեսակի համար 40 սանտիմետր կ. իսկ վերջին երեսի համար 20 սանտիմետր կ. երեքին անկողնակերպի համար 20 Օլո գեղը կրչայ:

(ԳԻՆ 10 ՍԱՆՏԻՄԵՏ)

(ԳԻՆ 10 ՍԱՆՏԻՄԵՏ)

ՅԱԾԵՐԻ ՄԻՋՈՅԸ

Ամենազորեղի յատկութիւնն է գաղափարական հակառակորդներին դէմ կուել մասնութիւնով, ու նրանց ջանքերի համար՝ զրպարտելով կառավարութիւններին առաջ:

Գարեբով տաճկի ստրուկ հայ ժողովրդի մէջ մատնելը, դաւաճանելը սովորական մի միջոց է դարձել թէ գաղափարական և թէ անձնական հակառակորդին տապալելու համար:

Հայերիս մէջ գտնվել են բազմաթիւ ցածր, որոնք իրանց անձնական հաշիւների համար, հակառակորդին զրպարտել են և կառավարութեան ներկայացրել իբր քաղաքականապէս խռովարար տարր, որ արմատականապէս ոչնչացնեն անձնական հակառակորդին:

Տաճկաստանում մենք ահագին թուով մասնիչներ ունեցանք և ունինք, նոյնիսկ նախկին յեղափոխականները ժամանակի ընթացքում սրանց թիւը սկսեց պակասել: Նորհիւ յեղափոխական կազմակերպութիւնների ձեռք առած խիստ միջոցների և անխնայ դատաստանի: Արտասահմանում մենք չենք կարող և իրաւունք չունենք այդ ցածրին ոչնչացնելու համար նոյն միջոցները գործ դնել:

Մասնելը, կառավարութեան դիմելը հակառակորդին տապալելու համար կատարվում է և Բուլղարիայում: Եւ այստեղ մատնողը մէկը չէ, այլ շատերը: այդ ստոր միջոցը գործադրվում է հաւաքաբար: Մատնիչները պատկանում են մեծ մասամբ ցած-չարչի ազա վաշխառու դասակարգին:

Բուլղարական զանազան քաղաքներում, գլխաւորապէս Փիլիպէ, Ռուսչուք, Վառնա և Բուրգազ, շարչի վաշխառու դասակարգը, որ միշտ իրան իրաւունք է համարում «ազգասիրարար» վարել գաղտնական և եկեղեցական գործերը, ազգային զանա-

զան հարցեր բարձրացած միջոցին՝ դիմում է ոստիկանութեան միջամտութեան, իր գաղափարական հակառակորդ տարրին իբր խռովարար և կոմիտանի ներկայացնելով: Մենք զգուշանք, և կարմրում որ այդ ցած արարածները մեր ժողովրդի են պատկանում և իրբ յանդգնութեամբ ձգտում մեր ամենասուրբ հիմնարկութիւնների զեկը իրանց ձեռքում պահել:

Այո, զգուշել են հայ մատնիչները: ցած են նրանք իրանց ամբողջ էութեամբ և ընդունակ ամենասուր դաւաճանութեան: Բարեբախտաբար «Բուլղարիան թուրքիս չէ, և ոչ նրա կառավարութիւնը Սուլթանի ցած թէժիմը»:

Բուլղար կառավարութիւնը և նրա օրգանները լաւ հասկանալով որ հայ մաքուր տարրը բուլղար կառավարութեան դէմ ոչ միայն ստեղծութիւն չունի, այլ և շատ գոհ է որ ապրում է այդպիսի մի թէժիմի տակ և երջանիկ որ օգտվում է երկրի ազատ օրէնքների հովանաւորութեամբ, բոլորովին կարեւորութիւն չէ տեւել և երբէք չի տալ թուրք ուղեղով հայ շարչիների զրպարտութիւններին:

Միայն մեր մաքուր և զարգացած տարրը միշտ պարտաւոր է մատնութիւններ և զրպարտութիւններ պատահած միջոցին, ուղղակի, օրինաւոր կերպով, տեղական օրէնքների հիման վրա, դիմել կառավարութեան և հասկացնել իրերի իսկական վիճակը: Մենք հաւատացած ենք որ բուլղար կառավարութիւնը երբէք չի զիջանի գործիք դառնալ ցածահոգի հայ զրպարտիչներին, որովհետեւ ինքն էլ լաւ գիտէ թէ, հայ շարչի թրքացած չորպահները որչափ ցած արարածներ են:

Թրքական ուղեղով ու բարոյականով այդ հրէշները շատ են բուլղար հայաբնակ ամեն մի քաղաքի մէջ: նրանք մնացորդներ

թրքական փտտած, նեխած թէժիմի և կեանքի: Բուլղարահայ լաւ տարրը պարտաւոր է ցախաւելով մաքրել զրանց հոտած կոյտերը, որոնք բարոյական զարչահոտութիւն են տարածում իրանց շուրջը:

Բուլղար կառավարութիւնը շատ լաւ հասկանում է, որ հայ յեղափոխական կոմիտանին Բուլղարիոյ մէջ խռովութիւններ անելու տրամադրութիւն չունի: Բուլղար կառավարութիւնը շատ լաւ հասկանում է, որ բուլղարահայ յառաջագէտ տարրը ձգտում է խաղող միջոցներով ազատվել տաճկական ախտերից, և, ինքը կառավարութիւնը, միշտ ցանկանում է որ իր ամեն ազգի հպատակները մաքուր գաղափարներով սողորված լինեն և օր առաջ ազատվեն թուրքից յիշատակ մնացած զաղբելի բարոյական ախտերից:

ՎԱՐՎ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

4. Պոլիս, 16 Յուլիս

Ինչպէս ասէց առաջ գրած էի այս երեքշաբթի պատրիարքարան կը սպասէին այն կայսերական բարեհաճ իրաւունքը՝ որոնց հաղորդուելու մասին երբեք անաշխին քարտուղարը 15 օր միջոց որոշած էր:

Պատահամբ այդ օրը ես ալ պատրիարքարան կը գտնուէի և տեսայ թէ ամէն ոք ո՛րքան անհամբեր էր գիտնալու թէ ե՞րբ պիտի գային այդ երանելի իրատէսները և ի՞նչ էին անոնց տրամադրութիւնները:

Գիւտնաստան մէջ զբաղած էի, երբ դուրսը ազմուկ մը բողբոջի մը ձեռքէն ներս «եկա՛ն» խորհրդաւոր բառը պոռաց մէկը և գնաց, ու մենք դուրս խոսեցինք:

Եկողները մէկ քանի թղթի կտորներ էին որոնք ուղղակի առիթէն եկած ըլլալով տարուցան պատրիարքին, դռները գոցուցան ու մենք սրահին մէջ սկսանք բնթղթի թիւններու ելնել:

Մէկ զանգակով դիւանապետները ներս կանչուեցան և այս միջոցին ինձ նման մէկ քանիներ պատրիարքին սենեկին դրան առաջ խոնտած, ներսը թափանցելու ճիգեր կընէինք և իրարու ուսի վրայէ բան մը նշմարել կը ծանայինք:

Անցան մէկ քանի տասնեակ վարկեաններ: մեր համբերութիւնը ալ հասած էր, կուղէինք գիտնալ իրատէսներուն պարունակութիւնը, երբ դիւանապետները խռոված դէմքով և գլխիկոր դուրս եկան. անմիջապէս հաւաքուեցանք շուրջերին և ի՞նչ լսենք աչէկ: Ա. Պէրպէրեան Ռ. Էֆէնտին Սուլթանին հաւատարիմ հպատակներէն ճանչցուած չըլլալուն, չկրնար եղբր այլեւս վարժարան վարել և այդ անուամբ վարժարանի մըն ալ դուրսը լսելու աւելորդ է: Բ. Այվազեան Յովսէփ եպիսկոպոս՝ Ռոտոսթոյէ եկած ատեն գրպանէն որբոց հանգանակութեան ցուցակ մը ելած ըլլալով, պատասխանատու ճանչցուած և դատաստանի ներքեւ առնել որոշուած է, հետեւաբար պէտք է հարցաքննիչին ներկայանայ: Գ. Եղնիկ եպս. Ապահունի շարունակած ըլլալով իր քարոզներուն մէջ աննպաստակարգութիւններ ընել հակառակ կառավարութեան, պէտք է այլեւս դադարի պաշտօնավարութենէ:

Պատրիարքը այս ամէնքը անորակելի հանդարտութեամբ մը ընդունելէ յետոյ, իբրեւ պարզ գործեր քաղաքական ժողովին յանձնեց պաշտօնական թղթերով միասին և ինքը անփոյթ ու անհոգ ելաւ Պէոյիւքտէրէ Էսաբանէնց օդափոխութեան գնաց:

Երեւակայեցք պատրիարք մը որ աւս արկածալից վիճակին մէջ զբօսնելու միջոցներ կը փնտռէ և կարծես այս եղածներուն վրայ բարձրէն խնդալու համար Պէոյիւքտէրէն չէր բաւեր և ահա յաջորդ օրն ալ Գուշա-Տէտէն ելեր է և հոն կերեր, լսմեր է. օրուան վիճակը ո՛ւր, Գուշա-Տէտէի գաղաթը ո՛ւր:

Օրմանեանի կտորած ընկողի

Թիւր 1000ը կանցնի կոր, ինչպէս կըսեն ու պէտք է ատր դարման մը խորհիլ: Երբեք իրան է ազգին այս աշխարհում վիճակին մէջ այսքան անզգամ և անզգայ պատրիարք մը ունենալը. մահ է, ոչնչացում է:

Կրօնական ժողովոյ ատենակազմները Տ. Գրիգորիս և Վահրամեայի սկզբնական վրայ, սրտերնուն ցաւէն և զգուանքէն հրաժարական տուած էին. սակայն իրենց անշահախնդիր և ուղղամիտ ջանքերը ժողովուրդէն զընահատուած ըլլալով, կարգ մը ծանօթ անձեր և մասնաւոր խմբակներ ստիպմամբ խնդրեցին իրենցմէ որ ասպարէզը Օրմանեանին չձգեն և հրաժարականին ետ առնելով դեռ ժամանակ մը շարունակեն:

Այս շարժումը Պուլիարիայէն Պատրիարքարան խրկուեց է կանանչ փաթոց մը, ֆէս մը, պինի մը և զոյգ մը մէսս բապուճ: Այս աւանդը երէկ յանձնուեցաւ պատրիարքին... որ գործածէ. սակայն մաքսը սընտուկը բացած ըլլալով լուր տրուեց է երկրորդ, ուրկէ քննիչ եկեր է և ապա հրամայուեց է իր արժանաւոր տիրոջ յանձնելու: Օրմանեան էֆէնտին ասանկ ըսնելէ չըզգածուիր, ընդհակառակը գոհ եղած է և ինքն ալ իր կողմանէ պալատ տեղեկագրելով ըսած է թէ կառավարութեան հրամանները գոծագրելու զեղծուն համար զինքը այսպէս կը հալածեն. թերեւս «խաղաղութի» այս պարագան աւելի մը համարուի պատրիարքին՝ բարձրագոյն զնահատման արժանաւոր և նուէրներ կամ պատուանշան ստանալու:

Սոսի գործը՝ որոյ մասին կրօնական ժողովը շատ ուղիղ ընթացք մը ունեցաւ, նախարարաց խորհուրդին յանձնուեց է. կը կարծուի թէ պիտի որոշեն ընտրելիաց ցանկ մը պահանջելու թէ այս պահանջները մտադիր է բնական շտապ և նախորդ ընտրութեան վրայ ծանրանալ:

Պատրիարքը առթիւ մը ներքին գործոց և ոստիկանութեան նախարարներուն համար Պալատ բողոքած էր. այս բողոքը նկատուածն առնուելով Սուլթանը բարեհաճեցաւ այս շարժումը բրկուելու ալ ակնակառու պատանջաններ շնորհել. զսնէ սա մարդը Պալատի առաջ վարկ ունենար. ոչ մին կայ և ոչ միւսը, ու ամէն ոք Պատրիարքը կը խաղցնեն, կը խաբեն և քթին կը խնդան ու դեռ ինքը չըզգար:

Նամակս վերջացնելու համար աւելցնեմ թէ քաղաքական ժողովը վերը յիշուած աստիճիթէսքէն ներսն պատասխանը տուած է և այս առթիւ Այվազեան և Եղնիկ սրբազանները, ինչպէս նաեւ Պէրպէրեան էֆէնտին քաղաքական ժողովի ներկայացան և հարկ եղած բացատրութիւնները տուին:

ՄԺՂՈՒԿ

Ս Ա Յ Ա Գ Ո Յ Ժ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՔԻԱՍԵԱՆԻ

Ամսոյս 19ին առաւօտեան, երկար ու ծանր հիւանդութիւնից յետոյ իր հոգին աւանդեց երիտասարդ Յարութիւնը իր ծնողներին նեցուկը և մեր թերթի սիրելի և յարգելի պատասխանատուն:

Յարութիւնի կեանքը, իբր հասարակութեան անդամի, շատ

նալու յոյսը վերցնելու համար պէտք էր նաեւ յարել. գործօն բանակին մէջ սպանի թողուցին իրենց վաշտերը, հրաժարեցան փայլուն իտալացիներու ծառայելէ, զաղարեցան պաշտօնի ու համազգեստի գերիներ ըլլալէ. մօտեցան ժողովուրդի անվերջ ցաւերուն, աւելի մօտէն մասնակից ըլլալու անոր կրած դառնութիւններուն: Որովհետեւ ան ասան միայն «գործիչ» մը իրաւունք ունի իր ժողովուրդի անկեղծ զեկամարը ըլլալու:

Պուլիար և Մակեդոնացի խանդավառ երիտասարդութիւնը իր թեւերը բացած է նոր կազմակերպութեանը թոխք տալու: Զոհարեութեան վսեմ օրինակներ կը տրուին. համալսարանական ու կրթնական ուսանողներն են որ վարտարի փուռք կը վազեն՝ կուզեն երկիր մասնալ ամէն ինչ արհամարհելով ի «սէր գործոյն»:

Զինուորականները կարծես խանձուածի պէս են. Մութաֆօվին և իր ընկերներու ստուերները զիրենք հանգիստ չեն թողուր: Շարժումը ու գործելու եռանդը օր ըստ օրէ կըրկնապատկելու վրայ է. խօսք կայ մի մեծ գումարի փոխառութեան մը և

կարճ եղաւ: Նա ժամանակ չունեցաւ այնքան ապրելու որ կարողանար իր հասարակական ձեռնարկները և տրամադրութիւնները պարզել:

Բայց որ լաւ հայ էր և հայ ժողովուրդի ցաւերով հետաքրքրող այդ մեզ համար փաստ է:

Յարութիւնը զաղափարի երիտասարդ էր. չը նայելով մի քանի հայեցակէտերի մէջ մեզ հակառակ, բայց և այնպէս ամենայն իրով ընդունեց «Շարժում»ի պատասխանաւորութիւնը:

Նրա երիտասարդ սիրտը զլվել էր «Շարժում»ի դէմ եղած ինտրիգներով: Եւ երբ ես նրան դիմեցի—նա պատասխանեց.

— Թէև մի քանի կէտերով ձեզ գաղափարական հակառակորդ եմ, բայց պատրաստ եմ ընդունել «Շարժում»ի պատասխանատուութիւնը, որովհետեւ տեսնում եմ թէ ձեզ դէմ լաւ միջոցներով չեն կռուում:

Պատասխանատուութիւնը ստանձնելուց յետոյ՝ նա շարունակ յուզված ու բորբոքված գրութեան մէջ էր. մեր հակառակորդ ինտրիգանները աշխատում էին Յարութիւնին համոզել որ յանկարծակի «Շարժում»ից հեռանայ, որպէսզի թերթը գոնէ մի քանի օրով ընդհատվի. ամեն ստոր միջոցներով բարոյական ճնշում էին գործ դնում դեռ կեանքի մէջ նոր մտած երիտասարդի վրա. և նա, յուզված ու վերաբողքով գալիս էր ինձ մօտ իր վայրոյթը հետեւեալ կերպով թափում.

— Այնպէս շատ վատ է. որչափ ցած են մարդիկ. չը գիտես թէ ի՞նչ միջոցներ են գործ դնում որ ես հրաժարվեմ պատասխանատուութիւնից. այս գիշեր ինձ այն վիճակին հասցրին, որ քիչ մնաց լայի:

այդ նպատակի համար հանուած է 6000 աքցիլ: Մայրաքաղաքի մէջ Մակեդոնացի գաղթական մի քանի հարուստներ խոստացրին են այդ հայրենասիրական գործին մասնակցել. այս բոլոր յախուռն ու անսպասելի փոփոխութիւններու պատճառ եղած է «Լահէյի» ժողովը: Սա աւելի ազդած է մակեդոնացիներուն իրենց համոզումներուն մէջ ամրանալ. այսինքն, միայն կոպիտ ուժով սիրանալու իր իրաւունքներուն:

Բայց ի՞նչ կընէ մեր երիտասարդութիւնը:

Տեսածնու՝ բոլորովին հակապատկեր իրողութիւններ. չենք հանդիպիր այդ փրփրերախ ու բոցավառ երիտասարդութեան, այլ մարած սրտերով, ախտացած ոգով հաճոյքի զուակներ, որք միայն իրենց գոյութիւնը կը ցուցնեն տէրտէրական ու եսական կոիւներու մէջ: Պուլիարիայի ազատ զարթոնները և զինուորական ծառայութեան շարքալ կեանքը. մեր փոքրիկ բուրաստանին լաւ ծաղիկներ կը հասցնէր: Առջի խոր սթափումէն, շատեր եռանդով զիմեցին կրթնականները և

Եւ երբ ես առաջարկում էի չը տանջուի հեռանայ, ես չեմ վերաւորվի. նա բարկացած արտասանում էր. «Ոչ, ոչ, այդպիսի վատութիւն չեմ կարող անել»:

Ամբողջ մի ամիս Յարութիւնը տանջվում էր «Շարժում»ի համար. նրան բացարձակ յայտարարում էին, որ ինքը միայն դրամի համար է մնում «Շարժում»ի պատասխանատուն: Այն ինչ Յարութիւնը մի սանթիմ անգամ չհա չէր սպասում «Շարժում»ից:

Այդ մեղադրանքը աւելի էր բարկացնում Յարութիւնին և նա տանջվում էր. տանջվում իբր մաքուր գաղափարի երիտասարդ, ու իր եռուն սրտի մախճով և թափով իր զգուանքը արտայայտում:

Իբրեւ պատասխանատու նա ոչ մի ճնշում չէր գործ դնում մեր վրայ, և մեր ներքին գործերին բոլորովին չէր խառնվում: Յարութիւնին շատ բարեկամ մարդիկ հարածվել են «Շարժում»ի մէջ և նա երբէք, մի բառով անգամ մեզ դժգոհութեան նշան անգամ ցոյց չէ տուել: Այդպիսի դէպքերում նա յայտարարում էր. բաւական է որ դուք անձնական հաշիւներից դրդված չէք քննադատում իմ բարեկամներին:

Նրա ամենաառաջին հոգն էր շուտով պաշտօն ստանալ իր ծընողներին նիւթապէս և բարոյապէս օգտակար լինելու, որոնց ամենամեծ ապաւէն էր: Մինչև պաշտօն ստանալը նա տանջվում էր իր ծնողներին հոգալու մաքով:

Եւ այսօր այդ պինդ սիրտը էլ չէ բարախում:

Մենք ամբողջ սրտով մասնակցում ենք Յարութիւնի ծնողած վշտին:

ՎԱՐԴՈ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՕՐՈՒԱՆ ՅՈՅԶԵՐ

Նորակազմ մակեդոնական զօմիթէն հիմակ իր կոչումը կարգարացնէ. նախկին թոյլ և կուսակցամոյ տարրերէ բաղկացած զօմիթէն վաղուց է որ աւելի արժանաւորներուն թողած է իր տեղը. «դիւանագիտական միջոցներով» ինքնորոշուած թիւն ստեղծողները խոստովանեցան իրենց անպատեղ գործունէութիւնը և իրենց ապիկարութիւնը. կը հրաժարին համոզուած որ ժամանակի ոգոյն հետ վարուելու էին (՝): Այնպէս որ փրատած ու թոռմած ուժը տեղի տուաւ թարմ ու կայտառ ուժի առջեւ. նոր մարմինը իրեն նշանաբան ունի միջոցներ չի խնայել բանակալութեան դէմ մաքառելու, «արդէն իրենք փորձով ցոյց տուին թէ վերադառ-

(՝) Ականջը խօսի Զօզանիկի: Որչափ հիացած կը խօսէր Մակեդոնական նախկին գործունէութեան մասին... Մ. Խ.

ոմանք զինուորական ապարէզը մըտան. բայց այդ երիտասարդութիւնը Պուլիարիայ հայութիւնը առաջնորդելու կոչում չունեցաւ. ժողովուրդը իր հրճուանքին մէջ յուսախարոսեցաւ. որովհետեւ ասոնք աւելի ֆառիկոխ սննդ քան խաչալիստներ, աւելի պաշտօնի և համազգեստի սիրահարներ էին քան ժողովուրդի նուիրուածներ: Երբ Մայր-Հայրենիքը իր դիւցազնական ճիգերուն մէջ ամէն մէկ զուակին կարօտութեանը միացրէր էր, այդ սուր շարժողներէն ու լիպկոններէն և ոչ մէկը իր տեղէն շարժուեցաւ. միակի ազնիւ հոգին որ այդ կղզիացած անտարբերութեանէն ցնցուեցաւ, Ռուսչուքէն Վահէ (Կ. Երկանեան), ենթասպայ մը, որ իր հրդեհած սիրտը վասպուրականի սատ ջրերուն մէջ զօվացուց, Գօթուրայի ձորը ինչալով Պետոի և Մարտիկի դիակներու հետ իրենց բրաւ Ռուսչուքը իր մէկ արժանաւոր զուակին յիշատակը յաւէրթացրեց: Ո՞վ հետեւեց այդ օրինակելի հայ երիտասարդին: Ոչ ոք:

Պուլիարայի ջերմ աշակցութիւն չէ ունեցած ընդհանուր գործին մէջ և զոհողութիւն մըն ալ չէ բրած. չնչին նիւթական մասնակցութիւնը

ՕՐ. ՖԻԷՅՁԸՐԻ ՄԱՆԸ

«Բիւզանդիոն» Վանայ թըզ- թակիցներէն մին ցաւօք կը գու- յէ Վառնայի և շըջակայ հայու- թեան շատ ծանօթ և յարգելի օր. Ֆրէյդըրի վշտալի մահը, ա- զիքներու բորբոքումի մը հե- տեանօք :

Ամէն անոնք որ գաղթականու- թեան էն տաք միջոցին կը տես- նէին ու կը լսէին այս Գանատայի առաքելութիւն անկեղծ, անձ- նուէր և խնամոտ ջանքերը՝ սիո- փելու համար թըքին ճիրաննե- րէն ճողորպած և անօթութենէն գալարուող մեր թշուառ գաղթա- կան հայերը, մեծ ցաւ մը պիտի զգան և սրտերնին անհուն դառ- նութեամբ մը պիտի լեցուի :

Իր պարզ, առաքինի և բարի դէմքը՝ պահպան հրեշտակի մը անուշ պսակ կերի նման, դեռ մեր աչքին առջ կը դժագրուի ու չենք կրնար խորին յուզում մը զսպել :

Աննման համբերող մը, տն- համեմատ կերպիւ բարձր, նե- րողամիտ և վեհ զգացումներով օծառած միսիօնարուհի մէր այն, զուրկ մարդորսութեան աններելի խիտէն և իր սրտին մէջ գամուած, արմատացած այն գութը և չարաչար աշխատելու տրամադրութիւնը զինքը պաշ- տելի ըրած էին ինչպէս յետին աղքատին որ կը բարեբարուէր անկից, նոյնպէս և զինքը ճանչ- ցողներուն որոնք կը զմայլէին և կը սքանչանային :

Անկլօ-Ամերիկեան բարեգործ ընկերութեան մը այս պանծալի ներկայացուցիչը սիրով և ներու- զամիտ ոգով մը միշտ կը յոր- գորէր, կը հանդարտեցնէր և անվրդով կը խորատէր զգաստա- նալ ամէն անգամ որ թշուառու-

թեան մէջ ինքնակորոյս մէկ քանի գաղթականներ կը մտո- տանային իրեն դէմ, կը նախա- տէին զինքը և իր անձին վրայ յարձա՛ում իսկ կը գործէին :

Երբեմնի բարեկամներէս մին որ նումլայի մէջ տեղի ունեցած դէպք մը զայրոյթով և յուզմուն- քով կը նկարագրէր, չէր կրնար չհիանալ իր տոկուն լայն սրտու- թեան վրայ, նոյնիսկ իրեն ուղ- ղուած ամենալիրբ մէկ նախա- տինքին հանդէպ :

Վանայ ամերիկեան օրիորդաց վարժարանին մէջ վարժուհի եղած միջոցին հայերէն լեզուն ուսած, սերտած էր և մեր ազգին ինչպէս բարի նոյնպէս և յոռի կողմերը, ու ասի մեծապէս նպաս- տած էր իր պաշտօնը լիովին և յաջողութեամբ ի գլուխ հանելու գործին մէջ :

Ի սրտէ ցաւելով այս կորուստին վրայ, մեր խորին յարգանքը կը մատուցանենք իր յիշատակին և կառաջարկենք որ Վառնայի թաղական խորհուրդը պատշաճ համարէ եկեղեցւոյ մէջ հոգե- հանգստեան պաշտօն մը մատու- ցանել և հրաւիրել հոն ամբողջ Վառնայի հասարակութիւնը որ խուճերամ պիտի դիմէ և պիտի ձայնակցի մեր եկեղեցական ա- բարողութեան և այսպէս ցոյց տուած պիտի ըլլայ իր երախ- տագիտութեան էն գոյզն ապա- ցոյցը հանդէպ անձնաւորութեան մը՝ որ գիտցաւ բարեբար մարմ- նոյ մը արժանաւոր և առաքինի ներկայացուցիչը ըլլալ և սրբել հազարաւոր թշուառներու ար- ցունքը :

Ա.ՋԱԻՍ

ԱՍՕՐ Է

Իհնէ գիտեմ որ դուք որոշած էք «Իրաւունք»-ի անունը ձեր թերթին մէջ չը յիշել և չը զի- ջանիլ այդ թերթին հետ վիճա- բանելու, բայց և այնպէս ստի- պուած եմ ձեզմէ խնդրել որ ըն- գունիք հետեւեալ գրութիւնս, որովհետեւ խնդրը հասարակա- կան է և ուրիշ միջոց մըն ալ չը կայ այդ մարդը հասարակու- թեան առջեւ որոշելու :

«Իրաւունք»-ի 55րդ թիւին մէջ կարդացի «Վարժապետական եւրո- խորագրով յօդուած մը ուր խրմ- բագիւրը՝ իրեն յատուկ ոսփե- ստութեամբ մը, կը զրպարտէ զիս թէ :

1. Իմ նախորդներս անխիղճ ու ապիկար ցոյց տուած եմ :
2. Ազգային մարմինները մի- եւնոյն ջուրով լուացեր եմ :
3. Ժողովուրդը անբան ու ան- զգայ հռչակեր եմ :
4. Ամէնքը հողին հաւասար ստորնացուցեր եմ :

Եւ դեռ ուրիշ ազատ ճառաս պոչով սուտեր՝ ազ պիպեւը եղած են այդ գաւազիր գրութեան :

Այսքան ալ բարոյական սնան- կութիւն . . . :

Այսքան ալ կրքի մոլեգնու- թիւն . . . :

Մարդ մը որ այդ աստիճանի անկում ունեցած է, բնականա- բար պիտուոյ ամէն զգացումէ զրկուած ճանչնալու է զինքը :

Երեսը թուրով ծածկէ այդպի- սին, ապտակէ, կեղտերը երե- ւան հանէ, նորէն չափնար, նա- րէն չի զգար, բոլոր անարգանք- ներուն մէջէն դուրս կը պրծի և կը դիմէ գէպի իր միակ նշանա- լանը—ստել, կեղծել, զրպար-

տել իր կաշին հոգալու հա- մար . . . :

Այս կարգի անկեալի մը դիմ- ուածքին միակ արժանի պատճառ խանը թէեւ արհամարհանքն է, բայց՝ որովհետեւ բազմին չեմ գիտեր ո՞ր խենդ խաղովը, գըծ- բազդաբար խմբագիր ըլլալու յա- ւակնութիւնը ունեցեր է, կը ստիպուիմ իր գիմակը պատուել քանի որ անկեղծութեան քողին տակ կը ճգնի իր անձնական գձուձ հաշիւները կարգադրել ինչ գնով ալ ըլլայ, մինչեւ իսկ ազգային շահերու վտանգումով և ժողո- վուրդի մը հասկացողութիւնն ու արժանապատուութիւնը կասկածի տակ ձգելով :

Այդ մարդուկը՝ իր գրական անպարկեշտութենէն վրդովուած, զինքը լքանելէս ի վեր, օր մը իսկ չէ գաղթած մութի մէջ, ան- կիւնները, անպատկառօրէն մեզ զրպարտելէ :

Ասիկա խօսք չէ, Ի հարկին բո- լոր ըսածներս կապացուցանեմ փաստերով և նոյնիսկ լրագրու- թեան մէջ իր մասին proces- verbal մը հրատարակելով :

Այս անգամ ալ, կերելի հա- մարձակութիւն առնելով իր նման կարգ մը մոխիր խառնուցներէ, վարժապետական եւր ջննագա- տելու պատուակով, նոյն գձուձ հաշիւները առաջ քշել կը խորհի, առանց մտածելու որ հարիւրաւոր հոգիներու ներկայութեան խօ- տածներս երբ կը խեղաթիւրէ, իր երեսին «ամօթ է, ամօթ» պու- աացողներ պիտի գտնուին :

Բայց զարմանալի չէ, քանի որ խեղճը կարմրելու միտք չունի և իր զարհուրելի տգիտութեամբ կը կարծէ, թէ ժողովուրդը իր արգահատանքին արժանի, ան- բան ու անզգայ է, որմէն սնօ- քէն մը իր մէկ ճառով կրնայ ճիշ- ծափեր խլել . . . :

այնքան կարեւոր չէ. ինքը շատ զիւրութիւններ ունէր, աւելի օգ- նելու իր եղբորը քան ուրիշը : Բայց նա խօսքով կը բաւականանար, և պարտազանց գտնուեցաւ ամենա- տաքնապալի բուպներու մէջ : Իր այս ապականելի ու մեղադրելի վարմունքը իր վարկը կը կոտրէ. գործելու աս- պարէզը միայն թողականի եւ հոգա- թարձուի գձուձ խնդիրներու մէջ չը կայանար. ո՛չ, մարդ պփգանգ կըզ- գայ տեսնելով ներքին ու կուսակ- ցական անհաստ հալածանքները, մեր ընդհանուր ցաւերու ու աղէտներու հանդէպ. ալ աւելի որ այդ ներքին մշտական կոիւները պատճառ եղան ստորացնելու մեր արժանիքը օտար տարրի առջեւ : Երիտասարդութիւնը թոյլ է, դեռ չէ յաջողած ազէս ու արատաւորած աղաներու հեղինակու- թիւնը կրտրել : դեռ ասոնք են զե- կավարողները. սա ապացոյց մըն է երիտասարդութեան անզօրութեանը. ինքը կուրօրէն աղայի մը ձեռքը գործը կը ըլլայ, ուրիշի մը գլխի եղած կուսակցական կոիւները ոչ գաղա- փարներու աններգաշնակութենէն ու անոնց բաղխումէն են, այլ ատելու- թենէն, ևսի զգուելի ազգեցութե- նէն և կամայականութիւննե-

րէն. ինչպէս Ֆիլիպի մէջ : Ալ փամանակ է. գաղթինք դատարկ յոխորտանքէ, քննադատելէ. գոր- ծենք : Գողափարական հակառակորդ կընդունինք, եթէ հակառակորդ լի «գաղափարի» նուիրուած է և ամէն զոհողութեան պատրաստ : Օրի- նակ անոնք մեզի լծակից մակեղո- նացի երիտասարդներէն. եթէ անձ- նուրաց ենք և մինչեւ սահմա- նազուխը երթալու բարեհաճութիւնը ունինք, այն «կազմակերպութիւնը» որուն դէմ թուրքէն աւելի բերան քացած ենք, զմեզ զրկաբաց կընդու- նի և փոխանակ լի «խօսք» տալու ուրիշներու գործնական միջոց կը ցուցնէ և կաջակցէ մեր ազատա- գրական գործին ծառայելու . . .

«Խօսքը մտքին լոյսն» է կը քարո- զեն :

Լօստոն և Բարիկ առատանած մեր ազգին մեծ բանաստեղծները, որոնք ժողովուրդը նախճիրներէ ա- զատելու յաւակնութեամբ, իրենց գրգորիչ և պատակաւի ճիշով աւելի կը լարեն հակառակութեան թելերը և կը փչին աստելութեան խորոյկը, որ լաւ բոցավառուի, խանձէ ու այրէ

այդ զօրաւոր հիւսուած յեղափոխա- կան ցանցը :

Իսկապէս մեզի տարօրինակ կը թուի այս գրազէտներու խելառ յար- ձակումները. եթէ մեր ընդհանուր թշնամիի ծրագիրը զիւրացնելու կը ձգտին, այդ իրենց չի յաջողիր : Իսկ եթէ փառասիրութենէն մղեալ կուզեն իրենք լծուիլ այն սայլին որ աւետեանց երկիրը պիտի տանի զմեզ, ազ ալ իրենց կարողութենէն վեր է : Որովհետեւ, ինչպէս որ ար- քունական նրբակազմ ձիւրը վարժ են միայն ոսկեգօծ կառքին մէջ գե- ղանի թագուհի մը կամ վէս իշխան մը սանիլ, և իսկոյն կը խրային թնդանօթի շտապներէն և չեն կրնար քաշել անոր մահաբոյր սայ- լը, այդպէս ալ այդ արհաւիրքներով լին սայլը ատոնց համար անյարմար է, չենք ուրբանար ատոնց գրական արժէ- քը. լաւ «գրական մշակ»ներ կրնան ըլլալ (!) գրուածքի մը գեղարուեստա- կան բոլոր ճոխութիւնները յատ-

(*) Այդ մի քիչ կասկածելի է, զո՞նց է հիւանդ գրականութեան մշակ- ներ :

կանիչներ չեն կրնար ըլլալ գրո- ղին գործիչի կարողութեանը : Մենք կը տեսնք ասոնց. ասէք քննարկ կոյսի հառաչներ երգեցէք, որովհետեւ Վասփորի հնչարարը մըթ- նալորաբ ձեզ «սէր» ստրկեցուցած է երգել, իսկ հերոսացած զինուորի մա- հը թողուցէք զինուորին : Բայց թէ ձեր բանաստեղծական ոգին ձեր սրտի հայրենասիրական բարախումները կը շարունակէ, մօտեցէք աւելի զինուորին, անկեղծաբար. մինչեւ գնդակ մը այդ բարախումներուն վերջ կուտայ : Ինչպէս Պօթէլ որ իր շունչովը կը տաքցնէր պուլկար յեղափոխութիւնը, և Պայրըն որ չը հանդուրժեց հիուսէն միայն եր- գել այլ գնաց օտար հայրենիք մը ելլալու և ևոն վերջացուց իր նուագը : Եթէ չէք անսար մեր եղ- բայրական կոչին ու աւելի կը խը- բախուտէք ձեր դաւադրիչ ուղու- թեամբ, հրամեցէք «գատապար- տուած դաւաճաններու նստարանը» որ ժողովուրդը ձեզ լաւ ճանչնայ : Մեր անձնուրաց ընկերներու աճիւն- ները անարգանգի ենթակուեցան մեր պարտքն է վրէժխնդիր ըլլալ : Տ.

Կերպարանք տխրամարտիկներն հետ
 սրբազան զորքով խաղաղության
 խնամարարությամբ
 Վերջինս կան բարձունքէք վար
 Վերջինս, մարդուկ, և ժողովուրդ
 դին հանդէպ անարգանք մը վե-
 րադրելով ինծի, դու ինքզ կո-
 պիտ կերպով մի՛ անարգեր զանի:
 Գիտցիր որ ճառս ծափահարող
 ներուն, և ուսուցչական խումբը
 շնորհաւորողներուն մէջ քու ետզ-
 մած ինչ ուղեղէք շատ աւելի մշա-
 կուած անձնաւորութիւններ կա-
 յին՝ որոնցմէն էր նաեւ հոգա-
 բարձութիւնն ու երիտասարդու-
 թիւնը:

Դառնանք առ այժմ զրպարտու-
 թեանց դէմ երկու խօսք ընելու .
 1. Ճառիս մէջ, սկիզբէն մին-
 չեւ վերջը, ամենեւին նախորդ-
 ներու խօսք ըրած չեմ, և անոնց
 գործունէութեան մասին բառ մը
 անգամ չարտասանեցի, վասն զի
 վարժարաններու քառային վի-
 ճակին պատճառները շատ պարզ
 և շատ զանազան են՝ որոնց մէջ
 մեր անմիջապէս նախորդները
 պատասխանատուութեան բաժին
 մը չեն կարող ունենալ, լաւ կամ
 գէշ, քանի որ հազիւ 4 ամիս
 պաշտօնավարած են:

Ես՝ առանց այս կամ այն մար-
 մինը մեղադրելու և առանց վե-
 րապահութեան, ճշգրտութեամբ
 պարզեցի միայն այն վիճակը որ
 գտանք մեր աշակերտները:

Կիրակի օրուան ըսածներս, եթէ
 պէտք ըլլայ, կէտ առ կէտ կա-
 պացուցանեմ վկայութեամբ հո-
 գաբարձուներուն, աշակերտնե-
 րուն, մասնաւոր այցելուներուն,
 ինչպէս նաեւ այն երկու ուսու-
 ցիչներուն—Տէր Սարգիսին և Պ.
 Սիրաքին,—որոնք թէ՛ անցեա-
 լին մէջ և թէ՛ այս տարի պաշ-
 ոսն վարած ըլլալով, ի հարկէ
 գիտեն ամէն բան և կը խոստո-
 վանին՝ եթէ լուր կամ ճշմար-
 տութիւնը ուրանալու վառութեան
 զիջանող չեն:

Հիմայ կարգը կուզայ «Իրա-
 ւունք»ը անճարաւորէն մրտադին
 հարցնել՝

—Աստուծոն մարդուկը, ինչէ՞ն
 գիտես, թէ ես ստեցի, պարկեշ-
 տութեան դէմ մեղանչեցի, աղքը
 գետնէ գետին զարկի, ինչո՞վ
 կրնաս հաստատել դուն՝

Որ ամբողջ տարւոյն ընթաց-
 քին մէջ մէկ անգամ գոնէ մեր
 դասախօսութեանց ներկայ չեղար, և
 վարժարանը, մեր շուրջը կը
 սլքտայիր միմիայն գրածներդ
 սրբազրել տալու և կամ յօդուած
 մը մուրալու համար:

Ուսկի՞ց գիտես դուն մեր ա-
 շակերտներուն անցեալն ու ներ-
 կան:

Ձե՞ս ամչնար . . . :

2. Որեւիցէ ազգային մարմնի
 դէմ ակնարկութիւն անգամ չըրի
 ես: Յաւ յայտնեցի միայն ծնող-
 ներու և երիտասարդներու ան-

տարբերութեան համար՝ որոնք
 սակայն, փոխանակ վիրաւորու-
 լու, եկան ձեռքս սեղմեցին, ի-
 ղենց անհոգութիւնը խոստովա-
 նելու մեծութիւնը ունեցան,
 վասն զի անոնք՝ քեզ, և մէկ
 երկու նմաններուդ պէս խանութ-
 պանի հաշիւներ, աղոտ կիր-
 քեր չունէին ուսուցիչներուս
 դէմ:

Այսչա՞փն ալ չընէինք:

Ի՞նչ, պառա՛ւ մարդուկ, կու-
 ղէիք որ շողքորդէիք . . . : Ձէ՛,
 ուրիշ դու չալէ դուն . . . :

3. Ըսածներէս կը հետեւի ե-
 ղեր, թէ ժողովուրդը «անբան է,
 անզգայ է»: Ի՞նչ սքանչելի խելք
 ի՞նչ պերճ հասկացողութիւն . . . :

Այդ քա՞նք ըմբռնել զօրեց ան-
 տաշ ուղեղը:

Խոնարհէ՛, ժողովուրդ, «Իրա-
 ւունք»ի պատկառելի հանճարին
 առջեւ որ ահա կուգայ դասող
 պաշտպանել . . . , և ամենաքան-
 չելի ազնուութեամբ! Խմբագրա-
 կան վսեմ! պարտականութիւն
 կը սեպէ ցեխտել իր շորտին,
 վայրենի զրպարտութեանց խոյ-
 տառակ պոռթկումով մը . . . :

4. Ամէնքը հողին հաւասար
 ստորնացուցեր եմ: Անանկ կըսէ
 մենձ խմբագիրը:

Այո՛, արգահատելի մարդուկ,
 իմ ճառովս գետնէն աւելի վար
 ստորնացուցի, բայց ոչ թէ ա-
 մէնքը, այլ մէկ քանի նմաններդ
 որոնք անկուճ անկում կը գո-
 րին, և իրենց պարտութեանը
 մէջ մոլորեցան՝ ամենէն ցած զէն-
 քերով կը փորձեն նորէն ու նորէն
 չափուիլ բոլոր անոնց հետ որոնք
 անհամեմատ առաւելութիւններով
 կարող են վրդովել իրենց շահա-
 ւետ հանգստութիւնը: Հասկցա՞ր
 Գնա՛ նորէն խելաթիւրէ, և այս
 ապտակէն յետոյ, կոկորդի մաք-
 րելով, շարունակէ գարշելի սու-
 տերդ:

Բայց հաւատա՛ որ քու «ան-
 բան» անուանած ժողովուրդդ ուշ
 կամ կանուխ կը հասկնայ իր շուր-
 ջը գտնուած ապականութեան
 պատկանդարանները, կը թքնէ
 անոնց երեսին, և «ամօթ է» կը
 պոռայ երբ յանդգնիս նորէն
 սուտ խօսիլ ու «խահվէ»ները զըր-
 պարտութեան պտտիլ:

Վ. ՇԱՀՐԻՄԱՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԿՐՈՒԹԵԱՆ

Վառնայի ազգային վարժարաննե-
 րու ամբողջ ուսանողութիւնս, մանչ
 թէ աղջիկ, սրտի մեծ ցաւով իմա-
 ցանք որ հրաժարեցուցած են մեր
 սիրելի և զլխաւոր ուսուցիչները
 Վ. Շահրիման, Կ. Պիօնեան և Վ.
 Մանուէլեան:

Մենք թէ մտաւորապէս և թէ բա-
 րոյապէս, զգալի կերպով օգտուե-
 ցանք այդ յարգելի պարոններու մէկ
 տարուան պաշտօնավարութեան:

Մեր օգուտը, մեր յոռաջդիմու-
 թիւնը կը պահանջէ որ այդ ուսու-
 ցիչները իրենց գործը շարունակեն:
 Խնդրեցինք, այսպէս գրաւոր, Պատ.
 Հոգաբարձութեանն որ յիշեալ պա-

րոնները վերահաստատէ իրենց նախ-
 կին պաշտօններուն մէջ:

Ձեզմէն ալ կը խնդրենք որ հրա-
 պարկաւ պաշտպան ըլլաք մեր շա-
 հերուն և թարգման հանդիսանաք
 մեր բաղձանքին:

Մեր մեծագոյն թշնամին անոնք
 են որ չեն լսեր մեր այս աղաչանքը
 և կը զոհեն զմեզ:

Մնամք յարգանք

Վառնայի Ազգ. երկսեռ ուսա-
 նողներու կողմէն

Վառնա, 18 Յուլիս 1899

Այս նամակը ստորագրած են բարձ-
 րագոյն կարգերու երկսեռ ուսանող-
 ներուն 30էն աւելին:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՕՐՄԱՆԵԱՆԸ ԶԸ ՅԻ ԵՆԲ

Արտասահմանի հայերը այնպիսի
 անխղիւր կապերով կապուած են
 Տաճկաստանի հայութեան հետ, որ
 չեն կրնար չի շահագրգռուիլ և
 ի հարկին ուղղակի չի միջամտել
 Մայր Հայրենիքի վերաբերեալ հրա-
 տապ հարցերուն:

Տաճկահայերը և անոնց հետ ար-
 տասահմանի հայութիւնը քաղաքա-
 կանապէս զլուխ կը ճանչնան Պոլսոյ
 Պատրիարքը՝ այն պայմանով որ
 չզրթէ ազգային Սահմանադրութեան
 հաւատարիմ մնալու իր երզումը և
 հսկէ այն ամէն իրաւունքներուն
 պահպանմանը, որոնք ժամանակի
 ընթացքի մէջ մեր ազգային և
 գրական գոյութեան անհրաժեշտ
 պայմանները դարձած են: Պատ-
 րիարք մը երբ կը յանդգնի փոփո-
 խել օրէնքները բռնաբարելով իրա-
 ւասութիւններ ու կարգ մը զեղ-
 ծումներ կը գործադէլ ստրկօրէն՝
 հաճելի ըլլալու համար տիրող կա-
 ոտավարութեան, և այս ամէնը
 ի վնաս ժողովրդի շահերուն և ար-
 դար ակնկալութիւններուն, նոյն
 այդ գործով կը գաղթի ազգին արժա-
 նի ներկայացուցիչը ըլլալէ: Արդ՝

Նկատելով որ, Օրմանեան Պատ-
 րիարքը բոլորովին քմահաճ և ա-
 պօրէն կերպով ընկանց կիրկիոյ
 կաթողիկոսին օրինակով ընտրու-
 թիւնը ու հիմայ ալ կը ճգնի այդ
 Աթոռը կցել Պոլսոյ Պատրիարքու-
 թեան և այսպէսով իրաւունքի
 հրէշային բռնաբարութիւն մըն ալ կը
 գործէ:

Նկատելով որ, այնքան զոհաբե-
 րութիւններու արդիւնք Ազգ. Սահ-
 մանադրութեան քանդումին հետա-
 մուտ՝ ամէն ճնշում և մեքենայու-
 թիւն ի գործ կը դնէ պահալիժօրէն
 փոփոխելու զայն, և ստով կը խոր-
 տակէ միակ չէնքը՝ որու վրայ կը
 կենայ Տաճկաստանի հայութիւնը:

Նկատելով որ, ուրիշ կենսական
 կարգ մը հարցերու մէջ իր բռնած
 ազգավնաս ուղղութիւնը բաւական
 չէր կարծես, շահատակութիւն մըն ալ
 կաւելցնէ դեռ նոր, որը ուղղակի
 սանչութիւն ունի արտասահմանի
 հայերուս հետ:

Նկատելով որ, կըսենք, վերջերս
 «արտասահմանի հայերուն կողմէն
 Լահէյի համաժողովին կատարուած
 դիմումներուն առթիւ՝ այս տխրա-
 հրոյակ Պատրիարքը յանդգնեց
 հեռագրով յայտարարել նոյն համա-
 ժողովին նախագահին թէ՛ արտա-
 սահմանի հայերը իրաւունք չունին
 յանուն հայութեան խօսելու և թէ՛
 այդ դիմումները զորիկ են ու և է
 նշանակութեանն»:

Նկատելով որ, այս գործով Օր-
 մանեան իսպառ խրամատ մը կը
 բանայ մեր և իր մէջտեղ, և սեղի

ունեցած դիմումներուն մասնակցող
 կամ համակրող ու և է մէկը չի կըր-
 նար առանց զայրոյթի տեսնել այս
 տխրատութեան փլուզումը մէկ բա-
 ոով, և այն ալ Տաճկաստանի հա-
 յերու Պատրիարքին կողմէ:

Հետեւաբար, մեր արդար իրա-
 ւունքը կը նկատենք այլևս չի լինի
 Օրմանեանի անունը մեր եկեղեցիին
 մէջ. անուն մը որ յաւիտենական
 ամօթը պիտի ըլլայ զարավերջի
 ազգային պատմութեան:

Պատրիարք, այն օրը որ Սահմա-
 նադրութիւնը անթերի զործադրե-
 լու սեղձոտնակոխ կընես:

Կաթողիկոսութիւն մը՝ որ արի ն-
 ներու մէջէն անցնելով մեզի հասած
 է, կը քայքայես:

Եւ վերջապէս, քու հօտիդ հարա-
 զատ արեւակեցները կը յաւակնիս
 զրկել, յանուն իրենց եղբայրնե-
 րուն խօսելու անկապտելի իրա-
 ւունքէն:

Արժանի չե՛ս բազմելու ներսնե-
 ներու և իզմիրներաներու գահին
 վրայ և մենք չենք կրնար հան-
 դուժել որ քու անունդ յիշատա-
 կուի մեր եկեղեցիին մէջ:

ԶԸ ՅԻՇԵՆՔ ՕՐՄԱՆԵԱՆԸ:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Սիրիտրէէն մեզ մասնաւոր
 հեռագիրով մը կիմացնեն թէ
 ժողովուրդի պահանջուով Օր-
 մանեանը չէ յիշուած:

— Կալացէն մասնաւոր նամակէ
 մը կը տեղեկանանք թէ տեղւոյն
 քահանաներէն մին՝ Լահէյի վե-
 հաժողովին առթիւ միթիւնկ գու-
 մարելու համար Վառնայի մի-
 թիւնկի քովի թէ՛նք քացած նա-
 մակները և շրջաբերականները
 կալացի Օսմ. Հիւպատոսին յանձ-
 նած է և ասկից ո՛չ միայն կա-
 լացի հապա նաեւ Իպրաիլիայի
 մէջ տեղեկութիւն ունեցողներ
 կան եղեր:

Կուզէինք գիտնալ թէ ճի՞շդ
 է մեզ տրուած այս տեղեկու-
 թիւնները և ո՞վ է այդ քահա-
 նան որ Օրմանեանի նման իր
 խելքովը թրքին աչքը մտնելու
 իզը տածած է: Անհամբեր պա-
 տասխանի կրուպսանք:

— Կովկասէն կը գրեն թէ
 Ռուս կառավարութիւնը մասնա-
 ւոր դիմումի մը վրայ հիմնուած
 հայ վարժարաններու կայուած-
 ները կը վերադարձնէ: Իշխան
 Բէհրութեան որ ձեռքաւարուած
 էր, կառավարչապետին տեղե-
 կագէրը «Թայմզ»ին հաղորդե-
 լուն պատճառաւ ազատ արձա-
 կուած է, բայց գաղտնի հսկո-
 ղութեան տակ կը գտնուի:

Ստացած ենք Հայկական Կըր-
 թարանի Ի. տարեշրջանի յայ-
 տարարութիւնը, զոր նիւթերու
 առատութեան պատճառաւ յա-
 ջորդ համարէն սկսեալ կը հրա-
 տարուկենք:

ԵՓՐՈՍԻՆԷ ԹԱՐԱԲՃԵԱՆ

Կը դասախօսէ կանանց վերաբե-
 հալ ամէն տեսակ զգեստ ձեւել ու
 կարել: Չափաւոր գին:
 Փ. Պօլիս, հրապարակ Գնեալ Պօ-
 բիս, թիւ 200:

Печатница «Взаимность» Варна.